

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

hayriyan.1976@mail.ru

ORCID iD: 0009-0006-0350-357X

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-370

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԳԱՍՊԱՐԸ»-Ի ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՔԻԱԹԻ ԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր – հեքիաթ, «Գասպարը», Գրիմ եղբայրներ, «Հայ Գասպարը», «Խելլոք էլզան», մշակում, տարբերակ:

Ամփոփում

Հոդվածի ուսումնասիրության առարկան Ավ. Իսահակյանի «Գասպարը» հետքիաթն է, որն անտեսվել է նույնատիպ կամ միևնույն հեքիաթախմբին պատկանող ժողովրդական և գրական-հեղինակային հեքիաթների համեմատական ուսումնասիրության ընթացքում, մի բաց, որը լրացվում է սույն հոդվածի շրջանակներում՝ կենսագրական, պատմական, սոցիոլոգիական մեթոդների և համեմատական բանագիտության ժամանակակից սկզբունքների կիրառությամբ: Ավետիք Իսահակյանի հետաքրքրությունը հայկական և համաշխարհային բանահյուսության նկատմամբ լայնորեն ուսումնասիրվել է ինչպես գրականագետների, այնպես էլ բանահավաքների կողմից: Իսահակյանը կոչ էր անում գրականություն ներմուծել ոչ միայն բանահյուսական մոտիվներ ու սյուժեներ, այլև կայուն բանաձևեր և հեքիաթային սկսվածքներ: Իսահակյանի հեքիաթների յուրօրինակ ոճն ու ժողովրդական նյութի մշակման սկզբունքները, անշուշտ, տարբերվում են հայ հեքիաթագիրների մյուս ներկայացուցիչների ստեղծագործական մոտեցումներից: Նրա հեքիաթների շարքում առանձնանում է «Գասպարը» հեքիաթը (1938 թ.), որը լայնորեն հայտնի է թե՛ ժողովրդական, թե՛ գրական տարբերակներով: Այն դասվում է ATU դասակարգման 1450-րդ տիպին՝ այն հեքիաթների շարքին, որոնց հիմքում ընկած է դեռ չծնված երեխաներին սպառնացող դժբախտության հանդեպ վախը: Այս հեքիաթային մոտիվը ստացել է նաև այլ

հայտնի մշակումներ, օրինակ՝ Գրիմ եղբայրների «Խելացի Էլզան» կամ Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը»: Նշենք, որ Էլզայի անունով հոգեբաններն անհիմն վախերն ու տագնապային վիճակներն անվանել են «Խելացի Էլզայի համախտանիշ»:

Եթե Հովհաննես Թումանյանն իր հայտնի «Կիկոսի մահը» (1913 թ.) հեքիաթի ստեղծման ընթացքում հիմնվել է հայկական «Հիմար քույրերը» հեքիաթի, իմերեթական «Ո՛վ է ավելի հիմար», ռուսական «Որտե՞ղ են հիմարները», «Գողացող գեղջուկը» (Աֆանասև), Գրիմների «Խելացի Էլզան» և այլ ժողովրդական հեքիաթների վրա, ապա, մեր դիտարկմամբ, Իսահակյանի հեքիաթն առավել մոտ է «Հայ Գասպարը» հայկական ժողովրդական հեքիաթին, սակայն միաժամանակ կրում է Ավ. Իսահակյանի՝ մահվան թեմայի շուրջ մտորումների կնիքը:

LUSINE HAYRIYAN

PhD in Philology

Institute of Archeology and Ethnography of the NAS RA

hayriyan.1976@mail.ru

ORCID iD: 0009-0006-0350-357X

THE PECULIARITIES OF ISAHAKYAN'S ADAPTATION OF “GASPAR” AND THE LITERARY AND FOLKLORIC VARIANTS OF THE TALE

Keywords: fairy tale, “Gaspar”, Brothers Grimm, “Armenian Gaspar”, “Clever Elsie”, adaptation, variant.

Abstract

The subject of this article is the tale “*Gaspar*” by Isahakyan, which has been largely overlooked in comparative studies of folk and literary-authorial tales belonging to the same or similar tale groups. This gap is addressed within the framework of the present study through the application of biographical, historical, and sociological methods, as well as contemporary principles of comparative folklore studies.

Avetik Isahakyan's interest in Armenian and world folklore has been widely examined by both literary scholars and folklorists. Isahakyan

advocated for the incorporation into literature not only of folkloric motifs and plots, but also of fixed formulas and traditional fairy tale openings. The unique style and message of Isahakyan's tales, as well as his principles for adapting folk material, clearly distinguish his work from the creative approaches of other Armenian fairy tale writers.

Among his tales, "*Gaspar*" (1938) stands out—both in its popular and literary variants—and has gained widespread recognition. According to the Aarne–Thompson (ATU) classification, it belongs to tale type 1450, which centers on the fear of misfortune befalling an unborn child. This fairy tale motif has appeared in other notable adaptations, such as the Brothers Grimm's "*Clever Elsie*" and Hovhannes Tumanyan's "*The Death of Kikos*". The significance of this tale group is so profound that psychologists have even named a syndrome characterized by irrational fears and anxiety after one of its heroines — "*Clever Elsie's Syndrome*."

While Hovhannes Tumanyan, in his renowned "*The Death of Kikos*" (1913, published in issue no. 4 of *Hasker*), drew on various folk sources such as the Armenian tale "*The Foolish Sisters*," the Imeretian "*Who Is More Foolish?*", the Russian "*Where Are the Fools?*", "*The Thieving Peasant*" (Afanasev), the Grimms' "*Clever Elsie*," and other folk stories, Isahakyan's tale appears more closely related to the Armenian folk tales "*The Foolish Sisters*" and "*Armenian Gaspar*." However, it bears Av. Isahakyan's profound reflections on death.

ЛУСИНЕ АЙРИЯН

Институт археологии и этнографии НАН РА

hayriyan.1976@mail.ru

ORCID iD: 0009-0006-0350-357X

ОСОБЕННОСТИ ОБРАБОТКИ ИСААКЯНОВСКОГО «ГАСПАРА» И ЛИТЕРАТУРНЫЕ И ФОЛЬКЛОРНЫЕ ВАРИАНТЫ СКАЗКИ

Ключевые слова: сказка, «Гаспар», Братья Гримм, «Армянский Гаспар», «Умная Эльза», обработка, вариант.

Аннотация

Объектом исследования настоящей статьи является сказка «Гаспар» Исаакяна, которая была оставлена без должного внимания в рамках сравнительного изучения народных и авторских литературных сказок, принадлежащих к аналогичной или той же группе сказок. Данный пробел восполняется в рамках данной статьи с применением биографического, исторического, социологического методов и современных принципов сравнительного литературоведения.

Интерес Аветика Исаакяна к армянскому и мировому фольклору был широко изучен как литературоведами, так и фольклористами. Исаакян призывал вводить в литературу не только фольклорные мотивы и сюжеты, но и устойчивые формулы, а также сказочные зачины. Уникальный стиль и посыл исаакяновских сказок, а также принципы обработки народного материала, конечно же, отличаются от творческого подхода других армянских сказочников. Среди его сказочных произведений особенно выделяется сказка «Гаспар» (1938), широко известная в народных и литературных вариантах по всему миру. Она относится к типу 1450 в классификации АТУ — сказок, в центре которых лежит страх перед несчастьем, угрожающим ещё нерождённым детям. Этот сказочный мотив имеет и другие знаменитые обработки, например, «Умная Эльза» братьев Гримм или «Смерть Кикоса» Ованеса Туманяна. В честь героини одной из сказок этого известного цикла психологи даже назвали синдром необоснованных страхов и тревожности — «синдром умной Эльзы». Если Ованес Туманян при создании своей знаменитой сказки «Смерть Кикоса» (1913) опирался на армянскую сказку «Глупые сёстры», имеретинскую «Кто глупее?», русские сказки «Где есть дураки?», «Вороватый мужик» (Аф.), сказку Гриммов «Умная Эльза» и другие народные сказки, то, по нашему мнению, сказка Исаакяна близка к армянским народным сказкам «Глупые сёстры» и «Армянский Гаспар», но при этом она несёт на себе отпечаток размышлений о смерти Ав. Исаакяна.

Ներածություն

Հոդվածում դիտարկված են այն սկզբնաղբյուրները՝ ժողովրդական այն հեքիաթները, որոնք հիմք են հանդիսացել Ավ. Իսահակյանի «Գասպարը» հեքիաթի մշակման համար: Տարբեր հրատարա-

կություններում (այդ թվում նաև ակադեմիական) կա՛մ ստույգ չեն նշվում, կա՛մ չեն հիշատակվում «Գասպարը» հեքիաթի ժողովրդական բոլոր այն փոփոխակները, որոնցից Իսահակյանն օգտվել է իր հեքիաթը ստեղծելիս ժամանակ: Այդ նպատակն իրականացնելու համար համեմատական քննության են ենթարկվել հեքիաթի ժողովրդական և գրական տարբերակները՝ իսահակյանական մշակման առանձնահատկություններն առավել տեսանելի դարձնելու համար: Աշխատանքի *կարևորությունը* պայմանավորված է Ավետիք Իսահակյանի ստեղծագործության նորովի գնահատման և ժողովրդական սկզբնաղբյուրների բացահայտման անհրաժեշտությամբ, իսկ *արդիականությունը*՝ հեքիաթի ազգագրական, ծիսահավատալիքային և փիլիսոփայական շերտերի նորովի ընկալմամբ: *Գիտական նորույթը* Իսահակյանի հեքիաթի ժողովրդական ստույգ ակունքների բացահայտման և նման մոտիվով հեքիաթակազմում այս ստեղծագործության առանձնահատկությունների բացահայտումն է:

Իսահակյանն ու ժողովրդական բանահյուսությունը

Ավետիք Իսահակյանի հետաքրքրությունը հայ և համաշխարհային բանահյուսության նկատմամբ լայնորեն քննվել է թե՛ գրականագետների, թե՛ բանագետների կողմից: Իսահակյանը կոչ էր անում գրականություն ներմուծել ոչ միայն բանահյուսական մոտիվներ ու դիպաշարեր, այլև կայուն բանաձևեր և հեքիաթային սկսվածքներ: Հաշվի առնելով ժանրի ձևակաղապարային և ոճական առանձնահատկությունները՝ նա հեքիաթը դիտարկում է որպես հայկական արձակը զարգացնելու նմուշ-նախատիպ. «Ես գրելու եմ իմ ժողովրդի կյանքը ներկայացնող վեպերը, պատկերները մեր հեքիաթների ոճով, ոգով, ձևով. ա՛յդ է հայկական պրոզա ձևը, դրանից պիտի զարգացնել մեր ռոմանը: Գրել, գրել միայն ազգային ոգով, գրել հայկական, հայավար, հայնակ գրել...» (Իսահակյան, 1977: 277): Նման մղումների իրագործումը, բանաստեղծի կարծիքով, պետք է ուղեկցվեր հեքիաթների խորագննությամբ (Իսահակյան, 1977: 277): Իսահակյանը խորհուրդ է տալիս նույնիսկ պատմությունն սկսել մեր հեքիաթների սկսվածք-բանաձևերի նմանությամբ, «եղել է չի եղել, ժամանակով,

շա՛տ դարեր առաջ, մի թագավոր է եղել, անունը Նապոլեոն... » (Իսահակյան, 1977: 270-271):

Նրա ստեղծագործական կապը հայ բանարվեստի, աշուղական և գուսանական պոեզիայի հետ ունի խորը արմատներ, որոնք երկարում են մինչև գրողի մանկությունը: Մանկության տարիներին Իսահակյանին տպավորել էր աշուղ Գալուստը, որի սազն ու հեքիաթն իրական աշխարհն այլափոխելու կախարդանքն ունեին (Իսահակյան, 1975: 119; Իսահակյան, 2000: 68–69): Ավ. Իսահակյանը հեքիաթի ժանրում սկսել է աշխատել 900-ական թվականների սկզբից («Աշխարհի գեղեցկուհին», 900-ական թվականներ, «Արևի մոտ», 1905, «Հողն է մարդու աչքը կշտացնում», 1906, «Հեքիաթ», 1910 (վերամշակվել է 1924 թ.), «Աղա Նազար», 1911, «Մաղասաբերդի տիրուհին», գրվել է 1920-ական թվականների առաջին կեսին, «Գասպարը» առաջին անգամ տպագրվել է 1938 թ., «Արդար մարդը», 1940, «Նուկիմ քաղաքի խելոքները», 1940՝ ստեղծելով հիմնականում իրապատում հեքիաթներ և հրաշապատում հեքիաթների տարրերով գործեր: Իսահակյանի հեքիաթներին բնորոշ չէ ընդգծված դիդակտիկ-մանկավարժական ուղղվածությունը: Հրաժարվելով մարդուն «կաղապարով ձուլող» ուսուցչությունից՝ նա օգնում է իր ընթերցողին ինքնուրույն քննել «մարդկության փորձերի պատմություններն» ու «քննելով սովորել» (Իսահակյան, 1977: 132):

1450 տիպի հեքիաթները ATU (Aarne–Thompson–Uther) դասակարգման համակարգում

Իսահակյանի հեքիաթակազմում առանձնանում է իր ժողովրդական և գրական տարբերակներով համաշխարհային լայն տարածում գտած «Գասպարը» հեքիաթը, որն առաջին անգամ հրատարակվել է 1938 թ.-ին «Հոհտեմբերիկ»-ի վեցերորդ համարում (էջ 2-6) (Իսահակյան, 1975: 471), սակայն անհայտ են թե՛ հեքիաթի գրության ստույգ ժամանակը, թե՛ ժողովրդական այն տարբերակը, որը գեղարվեստական մշակման է ենթարկվել: Ընդունված է համարել, որ Իսահակյանը մշակել է ժողովրդական «Խելքապակաս քուրերուն հեքիաթի» այլ տարբերակ կամ հենց Նավասարդյանի գրառած այդ հեքիաթը, որտեղ, ի դեպ, հնարածին հերոսի անունը Կիկոս է, իսկ հատվա-

ծային կամ դրվագային մանրամասները հեռու են Իսահակյանի մշակումից: Մեր խնդիրն է պարզել, թե ժողովրդական այս հեքիաթի որ տարբերակն է հիմնադրյուր ծառայել հեքիաթագրի համար: «Գասպարի» դիպաշարն աղերսվում է ATU (Aarne–Thompson–Uther) դասակարգման համակարգում 1450 («Խելոք Էլզան») (Uther Hans-Jörg(Antti Aarne and Stith Thompson) The Types of International Folktales, 2004 <https://vocabularyserver.com/atu/en/>) տիպին դասվող հեքիաթների շարքին, որոնց առանցքում դեռ չծնված երեխայի դժբախտության հանդիպելու մտավախությունն է կամ պատահելիք դժբախտության շուրջ անհիմն տազնապալ: Այս տիպին պատկանող հեքիաթներում առկա է իրողության և երևակայության բախում, ինչպես նաև ողջախոհության ու խելահեղության սահմանագծի հատման պատկերում: Հեքիաթախմբի առավել հայտնի հեքիաթը Գրիմ եղբայրների «Խելոք Էլզան» է (Die kluge Else) (Grimm, Grimm 1819: 173), որտեղ հնարածին դժբախտության պատճառով հեքիաթային հերոսուհու անհիմն լացն ու վախը ծիծաղաշարժ իրավիճակներ են առաջացնում: Հեքիաթն ունի բազմաթիվ եվրոպական և արևելյան (հայկական այս տիպի հեքիաթներին մոտ են պարսկական տարբերակները) փոփոխակներ, ավելին՝ նշանավոր հերոսուհու անձնանունով անհիմն վախերն ու անհանգստությունը «խելոք Էլզայի համախտանիշ» են անվանվել:

Հեքիաթային այս մոտիվն ունի հայտնի այլ մշակումներ ևս, ինչպես Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը»: Թումանյանին հայտնի էին հեքիաթախմբի հայկական և օտար մի քանի տարբերակներ. 1913 թ.-ին «Հասկերի» 4-րդ համարում տպագրված «Կիկոսի մահը» հեքիաթն ունեցել է նաև «Հայ ժողովրդական հեքիաթ» ենթավերնագիրը, որի գրության համար Թումանյանը նկատի է ունեցել հայկական «Խելքապակաս քուրերուն հեքաթը», իմերեթական «Кто глупее?», ռուսական «Где есть дураки?», «Вороватой мужик» (ԱՖ.), Գրիմների «Умная Элиза» և այլ ժողովրդական հեքիաթներ: Թումանյանի համար ազդակ է եղել նաև «Նոր-Դար» թերթի 1889 թ.-ի 101 համարում հրապարակված բանահյուսական երգիծական մի մանրապատում (ծառի տակ նստած մայր ու աղջկա կարճ երկխոսություն,

որը չծնված երեխայի մահվան համար սգացող մոր ողբասացության է վերածվում) (Թումանյան, 1994: 789):

Խոսելով Թումանյանի Կիկոսի մասին՝ Արծվի Բախչինյանը նկատում է, որ Կիկոսը «պիտի շարունակեր իր այլևայլ դրսևորումներն ունենալ այլ գրողների երկերում, անգամ եթե նա հասցրել էր «մահանալ» (Բախչինյան, 2018-2019: 139): Կիկոսի հեքիաթը մուտք է գործել Սուրեն Քոչարյանի «Ամաչկոտ հարսի հեքիաթը» խորագրված ստեղծագործություն, Վիոլետ Գրիգորյանի «Կիկոսը» բանաստեղծություն, որը Թումանյանի հեքիաթի մերօրյա ծաղրանմանակումն է, Թումանյանի Կիկոսն ու «Կիկոսի համախտանիշը» հայտնվել են նաև Արմեն Օհանյանի «Կիկոսի վերադարձը» և Լևոն Շահնուրի «Անունս Յոհան Ֆիշեր է» պատմվածքներում: «Կիկոսի մահը» վերնագրով պատմվածք ունի նաև Վլադիմիր Հայրապետյանը (Բախչինյան, 2018-2019: 139-146):

Հատկանշական է, սակայն, որ Թումանյանի հեքիաթն ու ստեղծած կերպարը չեն ազդել Իսահակյանի հեքիաթի վրա, որը, ինչպես նշեցինք, նույն հեքիաթախմբին է պատկանում: Հեքիաթագիր Իսահակյանն ընտրել է կերպարակերտման և թեմայի զարգացման այլ եղանակներ: Ժողովրդական հեքիաթն Ավ. Իսահակյանի գրչի ազդեցությամբ ստանում է հայ գրականության բացառիկ մշակներից մեկի տաղանդի կնիքն ու մահվան շուրջ մտորումների խորությունը:

Իսահակյանի «Գասպարը» և հեքիաթի ժողովրդական հենքը

Ինչպես նշեցինք «Գասպարը» հեքիաթի ժողովրդական սկզնաղբյուրը համարվում է «Խելքական քուրերուն հէքաթը» (Նաւասարդեանց, 1889: 27-31) կամ հեքիաթի մեկ այլ տարբերակը, որը կարծում ենք, «Հայ Գասպարը» (Հայկունի, 1895: 397-398) հեքիաթն է, քանի որ ակնհայտ են դիպաշարային ընդհանրություններն ու հեքիաթային հերոսների անվանակցությունը¹: Խոսքը Ս. Հայկունու գրառած հեքիաթի մասին է, որը հրապարակվել է «Արարատի» 1895 թ.-ի համարներից մեկում:

¹ Հնարածին հերոսի Գասպար անձնանունը հանդիպում է միայն ժողովրդական հեքիաթի՝ Հայկունու գրառած տարբերակում, հետևաբար, Իսահակյանը չէր կարող ծանոթ չլինել հեքիաթի այս փոփոխակին:

«Հայ Գասպարը» հեքիաթում Կիրակոսն ուներ երկու քույր: Մի օր մեծ քույրը գնում է աղբյուր, նայում տանձի ծառի փտած ճյուղերին, խփում ծնկներին և լաց ու կոծով, ողբասացությամբ սգում չծնված որդու կորուստը (Հայկունի, 1895: 397-398): Ավ. Իսահակյանի «Գասպարը» հեքիաթում նույնպես առկա են ողբասացության, քահանայի օրհնության, պատարագի և հոգեհացի փայլուն նկարագրություններ (Իսահակյան, 1975: 282-285): Ուշագրավ է, որ բանաստեղծին ողջ ստեղծագործական կյանքում զբաղեցրել է մահվան երևույթը²: «Հիշատակարան»-ում նա անցնում է մեռնողի և նրա մերձավորների հոգեբանության ու ապրումների քննության ճանապարհով. «Միակ իրականությունը մահն է, մյուս բաները՝ փող, սեր, փառք, ոչինչ բաներ են»: (ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, N 569-1): Մեկ այլ առիթով գրում է. «Ոգևորվենք մահով, մահի սարսափով, ոգևորվենք» (Իսահակյան, 1977: 74): Այս առիթով «Հիշատակարան»-ի հեղինակը թողել է նաև մեկ այլ կարևոր խոստովանություն. «Ես սոսկացի մահից և ստեղծեցի այն, ինչ որ անմահ է...»: (Իսահակյան, 1977: 236): Այսպիսով՝ ժողովրդական հեքիաթի իսահակյանական մշակումը՝ «Գասպարը», նույնպես կարելի է մահվան շուրջ մտորումների շարքը լրացնող ստեղծագործություններից համարել, որտեղ հեղինակը ներկայացնում է հուղարկավորության արարողությունների գրեթե ողջ շղթան՝ բացառությամբ բուն թաղման գործընթացը՝ հասկանալի պատճառներով, և իհարկե, այստեղ էլ ողջ հեքիաթի առանցքում ողբասացությունն է. «- Վա՛խ, վա՛խ, վա՛խ, ես երթայի մարդու, ինձ մի տղա լի-

² Մարդկությանը հուզող հարցերի հարցը՝ «ինչո՞ւ է մարդը դատապարտված մահվան», Իսահակյանը քննում է ժամանակային խորը կտրվածքով և տարբեր ժողովուրդների բանահյուսության հենքով՝ «Ինչպես եկավ մահը» (օվկիանոսյան առասպել), «Ցահվելի վրեժը», «Ազրայիլ մահվան հրեշտակ» (արաբական առասպել), «Հաճույքն ու մահը» (Հայմասավորքից), «Հրեական առասպել», «Առակ» (ըստ Լոխմանի), «Աթթիլան և իր սուրբը»: Հիշարժան են թեմային նվիրված նրա բազմաթիվ թարգմանական ստեղծագործությունները՝ «Իրկալա աստծու մոտ» (չինական՝ Ք. Ա. ութից-յոթերորդ դար), «Ծովը հառաչում է» (թաթարական), «Աստղաբաշխ Պտղոմեոսը» (մ.թ.ա. 150 թ.): Մի շարք ստեղծագործություններում Իսահակյանը քննում է մահացողի հոգեբանությունն ու մահվան փիլիսոփայությունն ընդհանրապես՝ «Անանդան և մահը» (առաջին անգամ տպագրվել է «Մահը» խորագրով), «Մի շաբաթ մահապարտի հետ», «Մաադիի վերջին գարունը», «Զինգիզ խան», «Սուկրատես», «Զիլի սուլթանի երգը, հավերժություն»:

ներ, անունը դնելի Գասպար: Գասպարս մեծանար, կտրիճ տղա դառնար, դրկից տղաների հետ խաղալով, խաղալով զար էս ծորը ման գար, ելներ էս ծառի վրա, փտած ճյուղը կտրեր, Գասպարս ընկներ էս քարի վրա, գլուխը ջարդեր... մեռներ, վա՛խ, իմ բանն ի՛նչ կլիներ, վա՛յ, Գասպար ջան, վա՛յ, Գասպար ջան, քո մոր աչքը կտրանար, էս օրը չտեսներ: Գասպարս մեռնի, ես ինչ տեսակ մեր լինեմ, որ չլամ: Էսպես անմխիթար լաց էր լինում, ողջ ծորը լցրել էր ողբի ծայնով» (Իսահակյան գ, 1975: 282):

Իսահակյանը գործածում է «վա՛յ» ծայնարկությունը, որը սգերգերում առավել հաճախ գործածվող ծայնարկությունն է. նկատենք, որ վաղնջական պատկերացումների համաձայն, երբ հոգին անջատվում է մարմնից, սավառնում է դիակի շուրջը մինչև մարմինը հողին հանձնելը, ուստի Զանգեզուրում թաղման հաջորդ օրը, օրինակ, ազգականներից մեկն այգաբացին գնում էր գերեզմանոց, համբուրում գերեզմանը, երեք անգամ «վա՛յ» բղավելուց հետո վերադառնում տուն (Լալայեան, 1898: 103-104), ինչը նշանակում է, որ հոգին ուղևորվում է երկինք (Հարությունյան, 2018: 434):

Ուշագրավ է նաև տերտերի օրհնության հատվածը, որտեղ ներկայացվում է ննջեցյալի հոգու համար տրվող պատարագի, հոգեհացի նշանակությունն ու բացատրությունը. «-Օրհնյա՛լ լինեք,- ասում է տերտերը,- մահն աստծու կողմից է, աստծու կամքին մի՛ հակառակեք, մեղք է: Դուք հիմի պիտի մտածեք մեռնողի հոգու համար: Պիտի պատարագ մատուցել տաք, որ աստված ողորմի ննջեցյալի հոգուն: Ինչպես հին օրենքն է, հոգու հաց պիտի տաք, որ դուռ-դրացի ուտեն, ողորմի տան նորոգ ննջեցյալին»: Հեղինակը մանրամասնորեն նկարագրում է նաև հոգեհացի արարողությունն ու մատուցվող ճաշատեսակները. «Ոչխարների գերը մորթեցին, թոնիրը վառեցին, կաթսաները դրին կրակի վրա: Ժամկոչը զանգերը զարկեց, Ժողովուրդը լցվեց եկեղեցին, քահանան պատարագ արավ, «հոգոց կարդաց»:

Հետո գյուղի մեծամեծները և դրացիները, տերտերին առաջնեքը գցած՝ եկան սգավոր պառավի տունը, սեղանին նստան, կերան հոգու հացը-փլավն ու խորովածը, կերան կուշտ ու կուռ: Արաղն էլ իրեն կարգին:

– Դուք ողջ լինեք,- ասացին նրանք պառավին ու աղջիկներին,- սուրբ հոգով մխիթարվեք, աստված ողորմի կանաչ-կտրիճ Գասպարին, արդարոց դասը դասվի, լույս դառնա հոգին» (Իսահակյան գ, 1975, 284-385):

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանի «Գասպարը» հեքիաթը հայ գրականության առանձնահատուկ ստեղծագործություններից է՝ իբրև ժողովրդական պոեզի գրական վերամշակման մի առանձնահատուկ ձև, որը դուրս է գալիս ավանդական ժանրային կաղապարներից և վերածվում խորը մշակութաբանական ու փիլիսոփայական խոհի՝ երգիծական նրբերանգների առկայությամբ: Հավատարիմ իր գեղարվեստական ծրագրին՝ ազգային ոգով, ոճով և ձևով գրելու պահանջին՝ Իսահակյանն ստեղծել է մի գործ, որն իր կառուցվածքով, լեզվական հագեցվածությամբ ու գաղափարական խտությամբ գերազանցում է զուտ հեքիաթային ժանրի սահմանները՝ վերածվելով կյանքի և մահվան վերաիմաստավորման, ինչպես նաև ազգային ծեսերի ու հիշողության խտացված գրական դրսևորման: Այսպիսով՝ իր փիլիսոփայական խորությամբ և ոճական հղկվածությամբ «Գասպարը» ձևավորում է հեքիաթագրության նոր որակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բախչինյան Ա.**, Կիկոսի հետագա կյանքը գրականության մեջ և արվեստում // Ոսկե Դիվան, պրակ 6, 2018-2019, էջ 139-148:
2. **ԳԱԹ**, Իսահակյանի ֆոնդ, N 569-I:
3. **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1994, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 821 էջ:
4. **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, Երևան, «Սովետական գրող», 1977, 474 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 3., Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 480 էջ:
6. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 482 էջ:

7. **Իսահակյան Ա.**, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, գիրք I (1875–1900), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 601 էջ:
8. **Լալայեան Ե.**, Մահ, թաղումն և մեռելոց // Ազգագրական հանդես, Դ գիրք,), № 2, 1898, էջ 100-105:
9. **Հարությունյան Ս.**, Հայ առասպելաբանություն, Երևան, Անտարես, 2018, էջ 528:
10. **Հայկունի Ս.**, Հայ Գասպարը // Արարատ, ԻԹ տարի, N10, 1895, էջ 397-400:
11. **Նաասարդեանց Տ.**, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 5, 1889, Տիփսիս, Տպարան Մովսես Վարդանեանի, 145 էջ:
12. **Grimm, J.; Grimm, W.**, Kinder- und Haus-Märchen. 2. Aufl. Bd. 1., LVI, Berlin, 1819., 439 S.
13. **Khazaie D.** Far from the “Maddening” Crowd A Comparative Study of some Persian, English and German Variants of ATU 1450 // *Studia mythologica slavica*, XIX, 2016, p. 187-210.
14. **Uther Hans-Jorg (Antti Aarne and Stith Thompson)** The Types of International Folktales, 2004 <https://vocabularyserver.com/atu/en/> (մուտք՝ 16.08. 2025):

REFERENCES

1. **Bakhtchinyan A.**, Kikosi hetaga gyank'yë grakanut'yan mech yev arvestum [The Afterlife of Kikose in Literature and Art] // *Voske Divan*, prak 6, 2018–2019, e'j 139–148.
2. GAT', Isahakyan'i fond [Isahakyan's Archive], No. 569-I.
3. **Grimm J., Grimm W.**, Kinder- und Haus-Märchen [Children's and Household Tales], 2nd ed., Vol. 1, LVI, Berlin, 1819, 439 e'j.
4. **Harutyunyan S.**, Hay araspelabanut'yun [Armenian Mythology], Yerevan, “Antares” hrat., 2018, 528 e'j.
5. **Haykuni S.**, Hay Gasparë [Gaspar the Armenian] // *Ararat*, year 29 (İT tari), No. 10, 1895, e'j 397–400.
6. **Isahakyan Av.**, Hishatakaran [Memoirs], Yerevan, “Sovetakan grogh” hrat., 1977, 474 e'j.
7. **Isahakyan Av.**, Erkeri zhoghovatsu, h. 3 [Collected Works, Vol. 3], Yerevan, “Hayastan” hrat., 1975, 480 e'j.
8. **Isahakyan Av.**, Erkeri zhoghovatsu, h. 4 [Collected Works, Vol. 4], Yerevan, “Hayastan” hrat., 1975, 482 e'j.

9. **Isahakyan A.**, Avetik' Isahakyan gitakan kensagrut'yun, girk' I (1875–1900) [Avetik Isahakyan: A Scholarly Biography, Vol. I (1875–1900)], Yerevan, HH GAA “Gitut'yun” hrat., 2000, 601 e'j .
10. **Khazaie D.**, Far from the “Maddening” Crowd: A Comparative Study of some Persian, English and German Variants of ATU 1450 // *Studia mythologica slavica*, Vol. XIX, 2016, e'j 187–210.
11. **Lalayan E.**, Mah', t'aghümë yev merelots' [Death, Burial and the Cult of the Dead] // *Azgagrakan handes*, Vol. D, No. 2, 1898, e'j 100–105.
12. Navasardeanc' T., Hay žoghovurdakan hek' iathner, g. 5, 1889, Tp' xis, Tparan Movsēs Vardanēani, 145 e'j.
13. **Tumanyan H.**, Erkeri liakatar zhoghovatsu, h. 5 [Complete Works, Vol. 5], Yerevan, HH GAA “Gitut'yun” hrat., 1994, 821 e'j.
14. **Uther, Hans-Jörg** (based on Antti Aarne and Stith Thompson), *The Types of International Folktales: A Classification and Bibliography*, 2004. Available at: <https://vocabularyserver.com/atu/en/> (Accessed: 16.08.2025).